

Classical Armenian Texts. Series editor John A. C. Greppin.—Thomas Artsruni. History of the House of the Artsrunik'. Introd. by R. W. Thomson, New York, 1991, 313 p.; Vardan Areveltsi. Chronicle. Introd. by R. W. Thomson, New York, 1991, 184 p.

«Հայ դասական տեքստեր» խորագիրը կրող շարքում (խմբագիր Զ. Գրեպին) լույս են տեսել Ագաթանգեղոսի, Փավստոս Բուղանդի, Կորյունի, Նդիշի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու Լրկերը, Այս շարքի շարունակությունն են կազմում Թովմա Արծրունու «Պատմություն տան Արծրունեաց» և Վարգան Արևելցու «Հալաքումն պատմութեան» երկերը, որոնք, համապատասխանաբար, 1862 թ. (Վենետիկ) և 1887 թ. (Ս. Պետերբուրգ) հրատարակությունների նմանահանությունն են, Բ. Թոմսոնի կողմից անգլերեն լեզվով գրված ընդարձակ առաջարաններով (Նյու-Ցորք, 1991): Հայկական սկզբնաղբյուրներին օտար գիտնականի տված բնութագիրը և գնահատականը անշուշտ որոշակի հետաքրքրություն կներկայացնի հայ ընթերցողի համար, ուստի անհրաժեշտ ենք գտնում համառոտակի վերաշարադրել առաջարանների բովանդակությունը:

Վաղ միջնադարյան Հայաստանում գրավոր խոսքի լավագույն հայտնի ձևը պատմական տեքստերն էին, այն իմաստով, որ դրանք, տարբեր առիթներով, օվիլի հաճախ են օգտագործվել գիտնականների կողմից, քան այլ ժանրերին պատկանող հայկական աշխատությունները: Եվ այդ գործառնալի շնորհ է թվա, եթե նկատի ունենանք, որ արևմտյան գիտական շրջաններում վերջին դարի ընթացքում հետաքրքրություն է ցուցաբերվում հայկական աղբյուրների նկատմամբ՝ Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմությունը ուսումնասիրելիս: Մեզ հասած հիմնական պատմական աղբյուրները հրատարակվել են (թեպետև ոչ բոլորը քննական խմբագրությամբ) և թարգմանվել տարբեր լեզուներով, սակայն անգլերենով՝ ոչ բոլորը:

Բ. Թոմսոնի կարծիքով, Արծրունիների տոհմը, որի պատմությանն է նվիրված Թովմայի քիչ ուսումնասիրված Լրկը, ազգային կյանքի վրա այնպիսի ազդեցություն չէր ունեցել, ինչ-

պես Մամիկոնյանների և Բագրատունիների տոհմերը: Այսուհանդերձ, ինչպես նշել է գիտնականը, Թովմայի աշխատությունը Լրկում է միջնադարյան հայ աղնական ընտանիքի շահերից և ոգուց. այն հատուկ գրվել էր Արծրունիների տոհմից առաջին թագապետ Գագիկին փառաբանելու համար: Ուստի պատմիչը մեծ գովեստով է ներկայացնում այն ժամանակվա հայ աղնականի կերպարը: Ընթերցելով Թովմային, կարելի է պատկերացնել X դարի հայ աղնականության՝ ըմբռնումով ստանձնած պարտականությունները և պատասխանատվությունները: Ներկայացված պատկերը կարող է որոշ չափով չափազանցված և հոնտորական լինել, սակայն շատ կողմերով այն ճշմարտացիորեն արտացոլում է կյանքը: Այնուհետև Բ. Թոմսոնը ընթերցողին համառոտակի ներկայացնում է Թովմայի աշխատության բովանդակությունը: Բարձր գնահատելով Թովմա Արծրունու գործը, գիտնականը դրա հետ մեկտեղ նշել է երկու հանգամանք, որոնք, ըստ նրա, հնարավորություն չեն տվել, որ պատմիչի գործը տեղ զբաղեցնի հայ պատմական դասական երկերի շարքում: Նախ այն սերտորեն առնչվել է Արծրունիների ճակատագրի և նրանց հայրենի նահանգի՝ Վասպուրականի հետ: Փավստոս Բուղանդը, Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին տվել են Լրկի հասարակության լայն պատկերը, իսկ Թովմայի շարադրանքը այդ տեսանկյունից ավելի սահմանափակ է: Բացի այդ, չնայած պատմիչը մանրամասն նկարագրել է իրեն ժամանակակից իրադարձությունները, սակայն ավելի լայն կարգի փիլիսոփայական ընդհանրացումներ չի կատարել, որոնք կարող էին կարևոր նշանակություն ունենալ այդ ժամանակաշրջանը հասկանալու համար: Թովմայի աշխատության արժանիքները Բ. Թոմսոնը տեսնում է նրանում, որ պատմիչը մանրամասն ներկայացրել է IX դարի հայ աղնականների վարվելակերպի շարժառիթները, նը-

րանց փոխհարաբերությունները: Թովմայի նկարագրած հասարակությունը XI դարում անհետացավ Ռյուզանդիայի և այնուհետև դրան հաջորդած թուրք-սելջուկյան նվաճումների հետևանքով: Թովմայի երկը, եզրակացրել է Ռ. Թոմսոնը, հնարավորություն է տալիս վերականգնել ընտիր փոքրամասնություն կազմող իշխանական տան կյանքը այն ժամանակահատվածում, երբ այն պայքարում էր իր անկախության համար:

Վարդան Արենցին, ինչպես նշում է Ռ. Թոմսոնը, միջնադարյան հայ գրականության ամենանշանակալից դեմքերից է, սակայն դժբախտաբար նրա գրվածքներից միայն մի քանիսն են առայժմ հրատարակվել, ինչը դժվարացնում է նրա աշխատանքի քննական տեսությունը, թեպետև, բարեբախտաբար, հանգուցյալ Փայլակ Անթարյանի վերջերս լույս տեսած երկհատորանոց հետազոտությունը կարևոր ներդրում է այս բնագավառում: Վարդանի երկը իրենից ներկայացնում է հայտնի տեղեկությունների հանրագումար: Ռ. Թոմսոնի կարծիքով այն տպավորություն է ստացվում, որ Վարդանի տեքստերը հիմք են ծառայել նրա ընդարձակ դասախոսությունների համար: Դրանով իսկ Վարդանի աշխատությունը հետաքրքիր է երկու տեսանկյուններից: Այն առաջին հերթին հայոց պատմության նշանակալից իրադարձությունների ամփոփագիր է: Մյուս կողմից, Վարդանի ժամանակագրությունը հիմնված է նախորդ դարաշրջաններին պատկանող մեծ թվով հայկական պատմական երկերի վրա և նրա աշխատության ուսումնասիրությունը ի հայտ է բերում այն գրքերի շարքը, որոնք չբնականության մեջ են եղել XIII դարի վանական դըպրոցներում: Վարդանի ժամանակագրության քննությունը Ռ. Թոմսոնը կատարել է ըստ Փ. Վնթարյանի հետազոտության, ուշադրություն դարձնելով պատմական երկի թե՛ բովանդակության և թե՛ աղբյուրների վրա: Չնայած Վարդանը մեծ թվով աղբյուրներ է օգտագործել, սակայն նրա չարագրանքը, ըստ Ռ. Թոմսոնի, դժվար է կորած տեքստերի համար որպես աղբյուր ծառայեցնել, քանի որ նա հազվագյուտ է հիշատակել իր աղբյուրների վերնագրերը: Դրա հետ մեկտեղ, Վարդանը շատ հայ գիտնականների և հեղինակների է հիշատակել,

սակայն որպես պատմական տեղեկությունների աղբյուրներ նա հատուկ վկայակոչել է Ագաթանգեղոսին, Կորյունին, Նդիշին, Ղազար Փարպեցուն, Մովսես Խորենացուն, Հովհաննես Դրասխանակերտցուն, Ուստանեսին, Ասողիկին և այլ պատմիչների: Ռ. Թոմսոնը կարևոր է համարել այն հանգամանքը, որ Վարդանը տարբեր աղբյուրներում հիշատակվող միևնույն իրադարձություններին վերաբերող տեղեկությունները ի մի է բերել և ստեղծել մի նոր տարբերակ: Սակայն վիճելի է գիտնականի այն միտքը, թե պատմիչի խոսքին պետք է մեծ զգուշությամբ մոտենալ: Նշելով, որ պատմիչը զգալի չափով տեղեկություններ է պահպանել, որոնք այլ կերպ կորսված կլինեին, Ռ. Թոմսոնը երկու հանգամանք է ընդգծել, որոնք թույլ չեն տալիս անուշադրության մատենել Վարդանի երկը: Առաջին հերթին այն ցույց է տալիս, թե ինչ պատմական երկեր էին հայտնի պատմիչի ժամանակ, գրանցից որոնք էին առանձնակի կարևորություն ներկայացնում: Եվ երկրորդ, նյութի ընտրությունը միջնադարյան հայ գիտնականը կատարել է Հայոց պատմության հիմնական գծերին համապատասխան: Վարդանը անդրադարձել է հայոց անցյալի առավել նշանակալից դրվագներին: Ինչպես իր Աշխարհագրությունում, որը իրենից ներկայացնում է համառոտ մեկնաբանություններով վայրերի թվարկություն, այնպես էլ այստեղ տեքստը բանավոր բացատրության հիմքն է հանդիսանում: Վարդանի համարվել իր ժամանակ առաջին հերթին պայմանավորված էր նրա՝ որպես ուսուցչի ունակություններով: Նրա հիմնական մտահոգությունն էր հաջորդ սերնդին իրեն հասած ավանդույթի փոխանցումը: Նրա բազմաթիվ աստվածաշնչական մեկնաբանությունները ևս առաջին հերթին բաղկացած են ճանաչված հեղինակություններից կատարված քաղվածքների միջբերումից: Իր գրվածքներում Վարդանը ներառել է դարերի խորքից եկող հիմաստությունը:

Ռ. Թոմսոնը երկու առաջաբանների վերջում տեղեկություններ է հաղորդել ընդդերմի հրատարակությունների, թարգմանությունների, դրանց նվիրված հետազոտությունների մասին:

Պետմ. գիտ. զեկտոր է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ